ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՎՀ-ՄԱԱՊՁԲ-18 /8

ք. Վայք «17» մարտի 2018թ.

Վայքի համայնքապետարան-ը ի դեմս համայնքի ղեկավար Թարո Ավետյանի-ի, որը գործում է <<Տեղական Ինքնակառավարման Մարմինների>> ՀՀ օրենքի հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ<<Ռոբերտ Հովսեփյան Ֆեդիկի>>-ը, ի դեմս տնօրեն Ռոբերտ Հովսեփյանի-ի, , այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել ավտոպահեստամասեր պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 900000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1:

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:[5]

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի

---

[5] *Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:*

կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Վայքի համայնքապետարան	Ա/Ձ <<Հովսեփյան Ռոբերտ Ֆեդիկի>>
ք. Վայք, Շահումյան 18	Հասցե՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական	Ք. Վայք Ջերմուկի խճ 14/16
Վարչություն	<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>>ՓԲԸ
Հ/Հ 900342121028	Վայքի Մասնաճյուղ
ՀՎՀՀ 08913477	հհ՝16035001809100
Համայնքի ղեկավար Թ. ԱՎԵՏՅԱՆ	հվ/հհ՝77604056
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«17» մարտի 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	34331300	Ավտոմեքենաների անիվներ	Բելշինա բելառուս	<<Օպել Վեկտրա>>Ա դասի ավտոմեքենայի անիվներ175/65 R13	հատ	16000	64000	4	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	4	2018թ
2	34331300	Ավտոմեքենաների անիվներ	Բելշինա բելառուս	Վազ 21-03 ավտոմեքենայի անիվներ 175/65 R 13	հատ	13500	54000	4		4	
3	34331300	Ավտոմեքենաների անիվներ	Բելշինա բելառուս	Վազ 21-21 նիվա ավտոմեքենայի անիվներ 225/60 R16	հատ	13500	54000	4		4	
4	34331300	Ավտոմեքենաների անիվներ	Բելշինա բելառուս	Վազ 21-061 ավտոմեքենայի անիվներ 175/65 R 13	հատ	25000	10000	4		4	
5	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Akom ՌԴ	Ավտոմեքենայի հոսանքի մարտկոց 75 A	հատ	32000	32000	1		1	
6	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Akom ՌԴ	Ավտոմեքենայի հոսանքի մարտկոց 65 A	հատ	32000	96000	3		3	

7	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Մանոլ ԵՎրոպա	Ավտոմեքենայի շարժիչի յուղ 10-40	լիտր	1400	70000	50	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	50	2018թ
8	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Մանոլ Եվրոպա	Ավտոմեքենայի Փոխանցման տուփի յուղ 80-90	լիտր	3200	32000	10	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	10	2018թ
9	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Ֆոռվադ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի ձգող մեխանիզմ (դիազա)	հատ	16000	16000	1	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	1	2018թ
10	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Ֆոռվադ ՌԴ	Վազ 21-061 ավտոմեքենայի ձգող մեխանիզմ (դիազա)	հատ	15000	15000	1	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	1	2018թ
11	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Ֆոռվադ ՌԴ	Վազ 21-03 ավտոմեքենայի ձգող մեխանիզմ (դիազա)	հատ	15000	15000	1	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	1	2018թ
12	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի տրանսմիսիա (դիֆեռ)	հատ	46000	92000	2	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	2	2018թ
13	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի ամորտիզացիոն մեխանիզմ (ռազատկա ներզեի)	հատ	4500	18000	4	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	4	2018թ
14	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի ամորտիզացիոն մեխանիզմ(շառավո)	հատ	3000	6000	2	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	2	2018թ

15	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-03 Ավտոմեքենայի ամորտիզացիոն մեխանիզմ(շառավո	Հատ	3000	18000	6	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	6	2018թ
16	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-061 Ավտոմեքենայի ամորտիզացիոն մեխանիզմ(շառավո	հատ	3000	18000	6	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	6	2018թ
17	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի ամորտիզացիոն մեխանիզմ (ռազատկա վերևի)	հատ	3000	12000	4	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	4	2018թ
18	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի ամորտիզացիոն մեխանիզմ(տոռավես)	հատ	13000	13000	1	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	1	2018թ
19	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի ընթացքային մասի մեխանիզմ (ստուպիցա)	հատ	7000	14000	2	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	2	2018թ
20	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի կիսալիսեռ(պոլուօս)	հատ	35000	35000	1	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	1	2018թ
21	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Օպել ԵՎրոպա	<<Օպել Վեկտրա>>Ա դասի ավտոմեքենայի դիմապակի	հատ	23000	23000	1	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	1	2018թ
22	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-061 Ավտոմեքենայի կիսալիսեռ(պոլուօս	հատ	30000	30000	1	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	1	2018թ

23	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Օպել ԵՎրոպա	<<Օպել Վեկտրա>>Ա դասի ավտոմեքենայի լուսարձակներ	հավաքածո	13000	26000	2	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	2	2018թ
24	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի արգելակի կոճղակներ առջևի (կալոտկա)	հավաքածո	3000	6000	2	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	2	2018թ
25	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի արգելակի կոճղակներ հետևի (կալոտկա)	հավաքածո	4000	8000	2	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	2	2018թ
26	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի արգելակման համակարգի սկավառակներ (տալերկա)	հավաքածո	13000	13000	1	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	1	2018թ
27	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	Վազ ՌԴ	Վազ 21-21 նիվա Ավտոմեքենայի արգելակման համակարգի թմբուկներ (բառաբան)	հավաքածո	20000	20000	1	Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	1	2018թ

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

Վայքի համայնքապետարան
ք. Վայք, Շահումյան 18
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական
Վարչություն
Հ/Հ 900342121028
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար Թ. ԱՎԵՏՅԱՆ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ <<Հովսեփյան Ռոբերտ Ֆեղիկի>>
Հասցե՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ
Ք. Վայք Ջերմուկի խճ 14/16
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>>ՓԲԸ Վայքի
Մասնաճյուղ
հհ՝16035001809100
հվ/հհ՝77604056

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 17» մարտի 2018թ. կնքված
ՎՀ-ՄԱԱՊՁԲ-18/8 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	Ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	34331300	Ավտոմեքենաների անիվներ	-	-	38400	38400	38400	38400	38400	44800	51200	57600	64000	64000	64000
2	34331300	Ավտոմեքենաների անիվներ	-	-	32400	32400	32400	32400	32400	37800	43200	48600	54000	54000	54000
3	34331300	Ավտոմեքենաների անիվներ	-	-	32400	32400	32400	32400	32400	37800	43200	48600	54000	54000	54000
4	34331300	Ավտոմեքենաների անիվներ	-	-	6000	6000	6000	6000	6000	7000	8000	9000	10000	10000	10000
5	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	19200	19200	19200	19200	19200	22400	25600	28800	32000	32000	32000
6	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	57600	57600	57600	57600	57600	67200	76800	86400	96000	96000	96000
7	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	42000	42000	42000	42000	42000	49000	56000	63000	70000	70000	70000
8	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	19200	19200	19200	19200	19200	22400	25600	28800	32000	32000	32000
9	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	9600	9600	9600	9600	9600	11200	12800	14400	16000	16000	16000
10	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	9000	9000	9000	9000	9000	10500	12000	13500	15000	15000	15000
11	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	9000	9000	9000	9000	9000	10500	12000	13500	15000	15000	15000
12	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	55200	55200	55200	55200	55200	64400	73600	82800	92000	92000	92000

13	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	10800	10800	10800	10800	10800	12600	14400	16200	18000	18000	18000
14	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	3600	3600	3600	3600	3600	4200	4800	5400	6000	6000	6000
15	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	10800	10800	10800	10800	10800	12600	14400	16200	18000	18000	18000
16	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	10800	10800	10800	10800	10800	12600	14400	16200	18000	18000	18000
17	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	7200	7200	7200	7200	7200	8400	9600	10800	12000	12000	12000
18	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	7800	7800	7800	7800	7800	9100	10400	11700	13000	13000	13000
19	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	8400	8400	8400	8400	8400	9800	11200	12600	14000	14000	14000
20	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	21000	21000	21000	21000	21000	24500	28000	31500	35000	35000	35000
21	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	13800	13800	13800	13800	13800	16100	18400	20700	23000	23000	23000
22	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	18000	18000	18000	18000	18000	21000	24000	27000	30000	30000	30000
23	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	15600	15600	15600	15600	15600	18200	20800	23400	26000	26000	26000
24	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	3600	3600	3600	3600	3600	4200	4800	5400	6000	6000	6000
25	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	4800	4800	4800	4800	4800	5600	6400	7200	8000	8000	8000
26	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	7800	7800	7800	7800	7800	9100	10400	11700	13000	13000	13000
27	34331300	Ավտոմեքենաների պահեստամասեր	-	-	12000	12000	12000	12000	12000	14000	16000	18000	20000	20000	20000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

Վայքի համայնքապետարան
ք. Վայք, Շահումյան 18
Բանկը՝ ՀՀ ՖՆ գանձարնական
գանձություն
հ/հ 900342121028
ՀՎՀՀ 08918477
Համայնքի ղեկավար Թ. ԱՎԵՏՅԱՆ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ <<Հովսեփյան Ռոբերտ Ֆեդիկի>>
Հասցե՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ
Ք. Վայք Ջերմուկի խճ 14/16
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>>ՓԲԸ Վայքի Մասնաճյուղ
հհ՝ 16035001809100
հվ/հհ՝ 77604056

/ստորագրություն/
Կ.Տ